

# Ապացույցների նշանակությունը և ապացուցման առանձնահատկությունները վարչարարության բարեփոխումներում

Սարգսյան Ա. Հ.

ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի  
քաղաքական գիտությունների թեկնածու (Հայաստան, Երևան)  
aren.sargsyan@inbox.ru

**Վճռորոշ բառեր՝** ապացույց, վարչարարություն, վարչական վարույթ, հիմնավորում, իրավաչափություն, վարչական մարմին, փորձագետ, մասնագետ:

## Значение доказательств и особенности доказательного процесса в административных реформах

Саркисян А. О.

Международный научно-образовательный центр Национальной Академии Наук РА  
кандидат политических наук (Армения, Ереван)  
aren.sargsyan@inbox.ru

**Аннотация.** В статье исследуются суть доказательного процесса в контексте отношений публичного права. Автором представляются особенности оценки доказательств в процессе административных реформ. Делается вывод, что административный орган в ходе следствия оценивает в качестве доказательства объяснения, которые могут давать как участники административного производства, так и эксперт, участвующий в производстве, и представители других органов. Обосновательный характер имеют также показания свидетеля, заключения экспертизы, составленные экспертом, документы, представленные участниками процесса, административным органом или другими органами, материалы дела, предметы, а также обстоятельства, при которых административный орган считает целесообразным определить фактические обстоятельства дела.

**Ключевые слова:** доказательство, администрация, административное производство, обоснование, законность, административный орган, эксперт, специалист.

## The value of evidence and features of the evidence process in administrative reforms

Sargsyan A. H.

The International Scientific Educational Center of the National Academy of Sciences of RA  
PhD of Political Sciences (Armenia, Yerevan)  
aren.sargsyan@inbox.ru

**Abstract:** The article examines the essence of the evidentiary process in the context of public law relations. The author presents the features of the assessment of evidence in the process of administrative reforms. It is concluded that the administrative body in the course of the investigation evaluates as evidence the explanations that can be given both by the participants in the administrative proceedings, and the expert participating in the proceedings, and representatives of other bodies. The evidence of a witness, expert opinions drawn up by an expert, documents submitted by participants in the proceedings, an administrative body or other bodies, case materials, objects, as well as circumstances in which the administrative body considers it appropriate to determine the factual circumstances of the case are also substantiated.

**Keywords:** proof, administration, administrative proceedings, justification, legality, administrative body, expert, specialist.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ որպես հիմունք ամրագրված է իրավական պետության վերաբերյալ դրույթը: Մակայն, միայն սահմանադրական մակարդակով նման գաղափարի ամրագրումը դեռևս բավարար չէ ապահովելու ՀՀ իրավունքի համակարգում հանրային հատվածի և իշխանական կառույցների փոխարարելություններում օրինականության և համամարդկային արժեքների կայացումն ու իրագործումը: Այս համատեքստում ընդգծված նշանակություն են ստա-

նում վարչարարության հիմնահարցերը և դրանք կարգավորմանն ուղղված միջոցառումները:

Վարչարարությունը վարչական մարմինների արտաքին ներգործություն ունեցող գործունեություն է, որը եզրափակվում է վարչական կամ նորմատիվ ակտերի ընդունմամբ, ինչպես նաև գործողություն կամ անգործություն է, որն անձանց համար առաջացնում է փաստական հետևանքներ [4, 3-րդ հոդված]: Օրենսդրական այս բնորոշումը կարելի է ավելի համառոտ ներկայացնել որպես վարչական մարմնի՝

դրանից դուրս գտնվողներին ուղղված արտաքին գործունեություն, որը պետք է եզրափակվի իրավական ակտով կամ փաստական հետևանքներ առաջացնող որևէ գործողությամբ (անգործությամբ): Նշված բնորոշումից ակնհայտ է դառնում, որ վարչական մարմնի ներքին աշխատանքային կարգուկանոնին վերաբերող վարչական մարմնի ղեկավարի ընդունած ակտերը վարչարարության արդյունք չեն, իսկ նույն ղեկավարի տվյալ վարչական մարմնի կազմից դուրս հասցեատերերին ուղղված նորմատիվ կամ վարչական ակտը հանդիսանում է վարչարարության արդյունք, եզրափակում [6, էջ 26]:

Իրավագիտության մեջ ներկայումս տարածում ունի այն դիրքորոշումը, որ իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է հանդիսանում այն, որ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում աստիճանաբար, ի հակակշիռ գործադիր իշխանության մարմինների, մեծանում է հենց դատական մարմինների դերը, ինչը գլխավորապես պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջիններիս գործունեությունում զուգակցվում են արդարադատության իրականացման և պետական կառավարման նկատմամբ վերահսկողության գործառնությունները: Սակայն, հիշյալ դիրքորոշումը միանշանակ չի ընկալվում մի շարք իրավագետների կողմից, որոնք գտնում են, որ այդ գործառնություններն անհամատեղելի են ընդհանրապես, իսկ վարչական արդարադատության դեպքում՝ հատկապես, քանի որ դատարանը, քննարկելով վարչական ակտի օրինականության ու հիմնավորվածության վերաբերյալ հայցադիմումը, գլխավորապես սահմանափակվում է տվյալ իրավական ակտի՝ օրենքին համապատասխան լինելու հարցադրման շրջանակներով, այսինքն՝ լուծում է ոչ թե փաստի, այլ իրավունքի հարցը, ինչը բացառում է արդարադատության գործառնությունը:

Հայ իրավագետներից Գ.Դանիելյանը այս հարցի առնչությամբ նշել է, որ համամիտ լինելով այն տեսակետի հետ, որ վարչական արդարադատությունը նպատակաուղղված է վարչական ակտերին՝ օրինականության չափանիշներով իրավական գնահատական տալու խնդրի լուծմանը, միաժամանակ գտնում է, որ հիշյալ խնդրի լուծման շրջանակներում դատարանը հարկադրված է լուծել նաև փաստի հետ կապված հարցեր [5, էջ 44-45]: Մասնավորապես, հարցի լուծման կապակցությամբ դատարանը գնահատում է այդ հանգամանքների առնչությամբ կողմերի ներկայացրած փաստարկները, բերված ապացույցները և այլն: Դատական կարգով գործադիր իշխանության մարմինների և դրանց պաշտոնատար անձանց իրավական ակտերի ու գործողությունների (անգործության) վիճարկման գործընթացը,

որպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունք, ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրությամբ: 2015թ. փոփոխություններով Սահմանադրության 50-րդ հոդվածն ամրագրում է պատշաճ վարչարարության իրավունքը [1, 50-րդ հոդված], որին 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությունում մասնակի էր անդրադարձ կատարվել:

Վարչարարության և վարչական վարույթի վերաբերյալ հիմնադրույթները տարածվում են վարչական մարմինների՝ հանրային իրավունքի բնագավառում իրականացվող ցանկացած գործունեության վրա, բացառությամբ՝ դատավարական իրավունքի նորմերով կարգավորվող հարաբերությունները: Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկություններ սահմանվում են համապատասխան օրենքներով և միջազգային պայմանագրերով: Սա նշանակում է, որ բոլոր այն դեպքերում, երբ իրականացվելու է վարչական որևէ վարույթ, այն իրականացնող վարչական մարմինը պետք է նախ պարզի, թե արդյոք իրեն վերապահված լիազորությունների շրջանակի մեջ մտնող հարցերով գոյություն ունեն հատուկ օրենքներ և որոշի, թե ինչ չափով են տվյալ իրավական ակտով կարգավորված քննարկվելիք հարցերը: Այն դեպքերում, երբ բավականին մանրամասնությամբ դրանք կարգավորված են այդ ակտերով, ապա վարչական մարմինը պարտավոր է վարույթ իրականացնելիս հետևել վարչական վարույթին վերաբերող ընդհանուր սահմանված կարգին, իսկ կոնկրետ վարչական վարույթին վերաբերող բովանդակային մասով առաջնորդվել կիրառման ենթական օրենսդրական ակտերով:

Վարչական վարույթը այն ճանապարհն է, որով կառավարչությունն ընդունում է իր գործունեության հիմնական արդյունքը՝ վարչական ակտը: Իրավաչափ, հիմնավորված ու փաստարկված (ամբողջական ապացուցողական հիմքով) պետք է լինի ոչ միայն այդ գործունեության արդյունքը, այլ նաև այն ստեղծելու գործընթացը՝ վարչական վարույթը [7, էջ 51-53]:

Վարչական վարույթի բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունն ապահովելն առանց վկաներին, փորձագետներին և այլ անձանց լսելու շատ դեպքերում անհնարին է: Այդ իսկ պատճառով օրենքը սահմանում է, որ վարչական վարույթում հանդես գալու իրավունք ունեն նաև վկան, փորձագետը, թարգմանիչը, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները, որոնք, սակայն, չեն համարվում վարույթի մասնակիցներ: Վկաների, փորձագետների, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնակցության անհրաժեշտություն է առաջանում հատկապես այն

դեպքերում, երբ որոշակի իրավունքներ տրամադրելու դիմումներ են ներկայացվում, և նախքան այդ իրավունքների տրամադրման հարցի լուծումը, անհրաժեշտություն է առաջացել ապացույցներ ձեռք բերել այդ իրավունքների տրամադրման հիմնավորման վերաբերյալ [9, էջ 9]: Վարչական վարույթին թարգմանչի մասնակցությունն անհրաժեշտ է դառնում այն դեպքում, երբ վարույթի որևէ մասնակից չի տիրապետում դրա իրականացման լեզվին՝ հայերենին:

Վարչական մարմինը վարչական վարույթում որպես ապացույց գնահատում է գործում առկա բացատրությունները, որոնք կարող են տրված լինել ինչպես վարչական վարույթի մասնակիցների, այնպես էլ վարույթին մասնակցած փորձագետի, այլ մարմինների ներկայացուցիչների կողմից, ինչպես նաև վարույթին մասնակցած վկայի ցուցմունքները, փորձագետի կազմած փորձագիտական եզրակացությունները, վարույթի մասնակիցների, վարչական մարմնի կամ այլ մարմինների ներկայացրած փաստաթղթերը, գործում առկա նյութերը, իրերը, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք վարչական մարմինն իր հայեցողությամբ պիտանի և անհրաժեշտ է համարում գործի փաստական հանգամանքների բացահայտման և գնահատման համար:

Այս համատեքստում հարկ է ընդգծել, որ վարչական մարմինն իրավունք չունի վարույթի մասնակիցներից պահանջել, որ նրանք ներկայացնեն այնպիսի փաստաթղթեր կամ դրանց նոտարական կամ այլ կարգով վավերացրած պատճենները, որոնց ներկայացնելը կամ համապատասխան վավերացմամբ ներկայացնելը նախատեսված չէ օրենքով. ցանկացած նման պահանջ կդիտարկվի որպես անօրինական [11, էջ 62-63]: Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի երրորդ մասի համաձայն՝ եթե երեխայի ծնվելու պահին նրա ծնողներից մեկը ՀՀ քաղաքացի է, ապա երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ [3, 11-րդ հոդված]:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը վարչական վարույթում ապացուցման պարտականության բաշխում է՝ ելնելով այն հանգամանքից, թե վարույթի արդյունքում ընդունվելիք վարչական ակտը վերջինիս հասցեատիրոջ համար բարենպաստ, թե անբարենպաստ փաստական հետևանքներ է ունենալու [4, 43-րդ հոդվ.]: Ըստ այդմ, վարչական վարույթում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ վերջինիս համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում, և վարչական մարմինը՝

անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Վարչարարության շրջանակներում պետք է պարզվեն գործի բոլոր փաստական հանգամանքները, որոնք ազդում են հոգուտ կամ ի վնաս անձի: Ապացուցման պարտականություն կրողը ոչ թե ապացուցում է, որ անձի օգտին առկա են բարենպաստ փաստական հանգամանքներ կամ ոչ բարենպաստ հանգամանքներ, այլ ապացուցում կամ փորձում է ապացուցել, որ համապատասխան հանգամանքները որքանով են անձի օգտին կամ ի վնաս նրա: Այսինքն՝ մի դեպքում վարչական մարմինը վեր է հանում իր մոտ առկա այն տեղեկությունները, որոնք բարենպաստ են անձի համար, մյուս դեպքում էլ անձն է պարտավոր վարչական մարմնին տեղյակ պահել իրեն վերաբերող այն հանգամանքների մասին, որոնք ոչ բարենպաստ են իր համար:

Վարչական վարույթի ընթացքում վարչական մարմինը կարող է փորձագետ նշանակել, եթե գործին առնչվող փաստական հանգամանքների ուսումնասիրության համար անհրաժեշտություն է առաջանում որևէ հարցով փորձաքննություն կատարել: Փորձագետ նշանակելու հարցով վարչական մարմինը կարող է դիմել համապատասխան փորձագիտական կամ իրավասու կազմակերպության ղեկավարին՝ անկախ դրա սեփականության ձևից կամ էլ դիմել համապատասխան ոլորտում մասնագիտական գիտելիքներ ունեցող ֆիզիկական անձի [10, էջ 81]: Փորձագետ նշանակելու համար իրավասու կազմակերպության ղեկավարին կամ ֆիզիկական անձին դիմելու մասին վարչական մարմինը պարտավոր է ծանուցել վարույթի մասնակիցներին: Ընդ որում՝ վարչական մարմինը որպես փորձագետ կարող է նշանակել նաև ինչպես իր մոտ կամ որևէ այլ վարչական մարմնում աշխատող համապատասխան մասնագետի, որը տիրապետում է տվյալ բնագավառի գիտելիքներին, այնպես էլ ցանկացած այլ ֆիզիկական անձի, որը որպես անհատ ձեռնարկատեր կամ աշխատանքային պայմանագրով զբաղվում է համապատասխան բնագավառում՝ տիրապետելով տվյալ բնագավառի գիտելիքներին: Փորձագիտական եզրակացությունը պետք է կազմվի վարույթի համար օրենքով սահմանված ժամկետի ընթացքում: Ուսումնասիրությունների հիման վրա փորձագետը կազմում է եզրակացություն և ներկայացնում է փորձաքննություն նշանակած վարչական մարմին: Փորձագետի եզրակացությունը պետք է հստակ պատասխաններ պարունակի բոլոր այն հարցերի վերաբերյալ, որոնք առաջադրել է վարչական մարմինը:

Ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր ճանաչելու իրավական հետևանքներին անդրադառնալիս պետք է ուշադրություն դարձնել այդ

ակտի հասցեատիրոջ կողմից տվյալ վարչական ակտի նկատմամբ վստահության իրավունքի առկայությանը: Բարենպաստ ոչ իրավաչափ վարչական ակտը, որի հիման վրա ծագում են միաժամանակյա կամ ընթացիկ գույքային պարտականություններ, կամ որն այդպիսի պարտականությունների համար նախադրյալ է համարվում, կարող է ուժը կորցնել միայն դրա անվավեր ճանաչվելու պահից, եթե այդ ակտով օգուտ ստացողը, վարչական ակտի նկատմամբ վստահության իրավունքի ուժով, արդեն ձեռք է բերել տրամադրված օգուտները կամ տնօրինել է գույքը, որի հետևանքով դրանք չեն կարող վերադարձվել, կամ վերադարձվելու դեպքում կարող է էական վնաս պատճառվել օգուտ ստացողին: Այս դեպքում կիրառվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի անհիմն հարստացման վերաբերյալ դրույթները [2, 1092-1099-րդ հոդվածներ]: Հատուցման ենթակա օգուտի չափը պետք է սահմանի այն վարչական մարմինը, որն անվավեր է ճանաչել ոչ իրավաչափ վարչական ակտը: Ընդ որում, օգուտ ստացողը չի կարող հղում կատարել վստահության իրավունքի վրա, եթե վարչական մարմինը բավարար ապացույցներ ունի, որ օգուտ ստացող անձը համապատասխան վարչական ակտի ընդունմանը հասել է համապատասխան խախտումների միջոցով: Եթե ոչ իրավաչափ վարչական ակտն անվավեր է ճանաչվել միայն մի մասով, ապա հետևանքները տարածվում են վարչական ակտի անվավեր ճանաչված մասի վրա:

Վարչարարության շրջանակներում ապացույցների հավաքագրման և գնահատման դիտանկյունից հարկ է նաև ընդգծել, որ վարչական ակտերի բեկանման հիմքերում կարևոր տեղ են զբաղեցնում նյութական իրավունքի նորմերի խախտումը կամ ոչ ճիշտ կիրառումը: Եթե վարչական բողոքը քննարկող վարչական մարմինը հիմնավորի, որ որոշում ընդունելիս վարչական մարմինը պարզել է գործին առնչվող բոլոր փաստական հանգամանքները, հետազոտել ապացույցները, սակայն վարչական ակտն ընդունելիս կիրառել է ոչ այն իրավական ակտը, որը պետք է կիրառեր, ապա նման վարչական ակտը ենթակա է բեկանման: Երկրորդ դեպքում թեպետ վարչական մարմինը կիրառել է կիրառման ենթակա նորմատիվ ակտը, սակայն դրան տվել է հենց այդ ակտի այլ նորմերից, կամ ավելի բարձր նորմատիվ ակտի բովանդակությունից չբխող մեկնաբանություն:

Օրենքի 77-րդ հոդվածի 1-ին մասի հաջորդ երկու ենթակետերում առանձնացվում է վարչական ակտի բեկանման երկու հիմքեր, դրանք են՝ վարչական վարույթը դրա իրավունքը չունեցող պաշտոնատար անձի կողմից իրականացված լինելը, այդ թվում՝ նաև կոլեգիալ մարմնի կազմում, ինչպես նաև վարչական ակտը

վարույթն իրականացրած անձանց կողմից ստորագրված չլինելը կամ դրա իրավունքը չունեցող անձի կողմից ստորագրված լինելը, որոնք բացարձակ հիմքեր են վարչական ակտը բեկանելու համար: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ընթացակարգային նորմերը խախտելը վարչական ակտի բեկանման հիմք կարող է դառնալ միայն այն դեպքում, երբ բողոքը քննարկող վարչական մարմինն իրավասու չէ ընդունելու վարչական ակտը [4, 77-րդ հոդված]:

Ինչպես արդեն նշվեց, ապացույցների ձեռքբերման աղբյուրներից է գնումը: Վարչական մարմինը կոնկրետ գործի քննարկման լրիվությունն ապահովելու նպատակով կարող է ինչպես տեղանքի՝ որևէ օբյեկտի կամ առարկայի, այնպես էլ ֆիզիզկական անձի գնումը նշանակել: Վարչական մարմնի որոշմամբ գնմանը կարող են ներկա գտնվել վարչական վարույթի մասնակիցները: Չննումը կարող է իրականացնել վարչական մարմինն ինքը՝ իր իրավասու մասնագետի կողմից: Իսկ եթե գնումը պահանջում է հատուկ մասնագիտական գիտելիքներ, վարչական մարմինն այս դեպքում ևս կարող է հրավիրել փորձագետ՝ գնումը կատարելու նպատակով, որը գնման արդյունքներով պետք է կազմի փորձագիտական եզրակացություն [8, էջ 60]: Չննման անհրաժեշտություն առաջանում է հատկապես տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների խախտումների դեպքում, երբ ավտոտեսուչը գնում է համապատասխան տրանսպորտային միջոցը՝ պարզելու, թե տեխնիկական ինչ հնարավոր անսարքությամբ է այն շահագործվում:

Փորձագետի կողմից փորձաքննության ընթացքում կատարվող գործողություններին կարող են ներկա գտնվել տվյալ վարչական վարույթի մասնակիցները, եթե նրանց ներկա գտնվելը չի խոչընդոտում փորձաքննության անցկացմանը: Որևէ որոշում կամ թույլտվություն չի պահանջվում փորձաքննությանը ներկա գտնվելու համար: Այնուամենայնիվ, նրանց ներկայությունը թույլատրելու կամ չթույլատրելու վերաբերյալ վերջնական բանավոր որոշում կայացնելը վերապահված է փորձագետին, որովհետև նա է իրավասու որոշելու՝ տվյալ անձանց ներկայությունը կխոչընդոտի՞ արդյոք բազմակողմանի, լրիվ և անաչառ փորձաքննությանը, թե՛ ոչ: Հետևաբար՝ եթե փորձագետն առարկի, ապա վարույթի մասնակիցները չեն կարող ներկա գտնվել փորձաքննությանը: Սակայն փորձագետի առարկությունը ևս պետք է հիմնավոր լինի: Փորձաքննությանը ներկա գտնվելու մասին օրենդրական կարգավորումը պետք է մեկնաբանել ուղղակիորեն: Այսինքն՝ ներկա գտնվելիս վարույթի մասնակիցները պարտավոր են հարցերով կամ այլ գործողություններով անհարկի չզբաղեցնել փորձագետին

և հնարավորություն տալ նրան բազմակողմանի, լրիվ և անաչառ փորձաքննություն կատարել: Ֆիզիկական անձի, տեղանքի, որևէ օբյեկտի կամ առարկայի զննմանը նույնպես կարող են ներկա գտնվել վարչական վարույթի մասնակիցները: Ինչպես փորձաքննության դեպքում, զննությանը նույնպես կարող են ներկա գտնվել միայն վարչական վարույթի մասնակիցները:

#### Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրության փոփոխություններ, 2015թ., ՀՀ ՊՏ հատուկ թողարկում/2015, 21.12.2015թ., հասանելի է [http://www.arlis.am]
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին, հասանելի է [http://www.arlis.am]
3. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 1995թ. հոկտեմբերի 23-ին, հասանելի է [http://www.arlis.am]
4. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2004թ. փետրվարի 18-ին, հասանելի է [http://www.arlis.am]
5. **Դանիելյան Պ.**, Վարչական վարույթ և դատավարություն: Ուսումնական ձեռնարկ / Եր., Տրգրան Մեծ, 2011

6. Հարցեր և պատասխաններ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի վերաբերյալ, 2-րդ լրամշակված հրատ., Եր., 2007
7. **Барабашев А. Г., Клименко А. В.**, Административная реформа и реформа государственной службы в России – вопросы реализации и координации: М., Издательский дом Государственного университета Высшей школы экономики, 2010
8. **Динисенко В. В.**, Административное и судебное усмотрение в производстве по делам об административных правонарушениях: общее и особенное. // Административное право и административный процесс, 2011, № 3
9. **Женетль С.**, Административный процесс и административные процедуры в условиях административной реформы, автореф. дис. д-ра юрид. наук, М., 2009
10. **Купреев С.С.**, Об административном усмотрении в современном праве // Актуальные проблемы административного права и процесса, 2012, № 1
11. **Россинский Б. В., Стариков Ю. Н.**, Административное право, М., 2009

*Տճանա/Հանձնվել է՝ 12.02.2021  
 Рецензирована/Գրախոսվել է՝ 18.02.2021  
 Принята/Ընդունվել է՝ 24.02.2021*